

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-
Հայաստան» ծրագրի Շահառուների խորհրդի
4-րդ կազմի անդամների ընտրությունների
ընտրական հանձնաժողովին

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-
Հայաստան» ծրագրի Շահառուների խորհրդի
4-րդ կազմի անդամ Մարատ Ատովյանից

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Ընտրական հանձնաժողովի հարգելի անդամներ,

01.10.2009թ. տեղի ունեցավ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-
Հայաստան» ծրագրի Շահառուների խորհրդի 4-րդ կազմի անդամների 26.09.2009թ.-ին
անցկացված ընտրությունների քվեաթերթիկների վերանայման գործընթացը, որին
մասնակցել են որպես Շահառուների Խորհրդի անդամ: Վերանայման գործընթացի
վերաբերյալ ունեն եմ հետևյալը կարծիքը.

Շահառուների խորհրդի 4-րդ կազմի անդամների ընտրությունների ընտրական
հանձնաժողովը կայացրել է որոշում, ըստ որի հանձնաժողովի անդամների ձայների
գերակշռող մեծամասնությամբ վավեր է համարել թվով չորս քվեաթերթիկ, որոնք ըստ
Լուսյան պետք է ճանաչվեն անվավեր, քանի որ իրենց մեջ պարունակում են Շահառուների
Խորհրդի անդամների ընտրությունների կարգով սահմանված նշումներից տարբերվող նշում:

Հարգանքով.

Շահառուների Խորհրդի անդամ

01.10.2009թ.



Մ. Ատովյան

**«Հագարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան»
ծրագրի Շահառուների խորհրդի 4-րդ կազմի
անդամների ընտրությունների ընտրական հանձնաժողովին**

«Հագարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-
Հայաստան» ծրագրի Շահառուների խորհրդի
4-րդ կազմի ընտրության
դիտորդ՝ **Սոնա Հարությունյանից**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ՝

«Հագարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ծրագրի Շահառուների
խորհրդի 4-րդ կազմի անդամների՝ հոկտեմբերի 1-ին կայացած ընտրությունների
քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին

Ընտրական հանձնաժողովի հարգելի անդամներ,

Սույն թվականի հոկտեմբերի 1-ին տեղի ունեցավ «Հագարամյակի
մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ծրագրի Շահառուների խորհրդի 4-րդ
կազմի անդամների ընտրությունների քվեարկության արդյունքների վերահաշվարկ՝
Շահառուների խորհրդի 4-րդ կազմի անդամության թեկնածուներ առաջադրված
Գաբրիել Բալայանի և Աշոտ Ալեքսանյանի խնդրանք-դիմումի հիման վրա:

Մինչև վերահաշվարկը սկսելը, հանձնաժողովի նախագահը ներկաներին
ներկայացրեց, որ գործընթացը ոչ թե վերահաշվարկ է, այլ՝ վերանայում:

Վերանայման ժամանակ ակնհայտ դարձավ, որ դիմումում արժարժված
փաստերը հիմնավոր էին: Այն էր. վավեր քվեաթղթիկների ծրարում առկա էին մի քանի
քվեաթղթիկներ, որոնց վավերականության հարցը կասկածի տակ դրեց ներկաներին:
Դրանց թվում էին նաև 4 քվեաթղթիկներ, որոնցում ընտրողի արտահայտած կամքը
չէր պարունակում V-աձև նշում, այսինքն դրանք չէին համապատասխանում
սահմանված կարգին: Հանձնաժողովի նախագահի կողմից հիշյալ բոլոր
քվեաթղթիկների վավերականության հարցը դրվեց քվեարկության. հանձնաժողովի
ներկա 6 անդամներից 5-ը 4 ակնհայտ անվավեր քվեաթղթիկներին կողմ քվեարկեցին՝
դրանք վավեր ճանաչելու համար, իսկ մեկ անդամը՝ դեմ:

Վերոգրյալից հետևում է, որ խախտվել է Շահառուների խորհրդի անդամների
ընտրությունների կարգի 4-րդ հոդվածի 11-րդ կետի պահանջը:

Հարգանքով՝

Դիտորդ՝



Սոնա Հարությունյան

01. հոկտեմբերի, 2009թ.

ՀԱԳ-ՀԱՅԱՍՏԱՆ
Մուտքի № _____
Կայանքի _____

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան»
ծրագրի Շահառուների խորհրդի 4-րդ կազմի
անդամների ընտրությունների ընտրական հանձնաժողովին

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան»
ծրագրի Շահառուների խորհրդի 4-րդ կազմի ընտրության
դիտորդ՝ Մարիաննա Եղիազարյանից

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ծրագրի Շահառուների
խորհրդի 4-րդ կազմի անդամների՝ հոկտեմբերի 1-ին կայացած ընտրությունների
քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին

Ընտրական հանձնաժողովի հարգելի անդամներ,

Սույն քվեականի հոկտեմբերի 1-ին տեղի ունեցած «Հազարամյակի
մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ծրագրի Շահառուների խորհրդի 4-րդ
կազմի անդամների ընտրությունների քվեարկության արդյունքների վերահաշվարկին
մասնակցել եմ որպես դիտորդ: Կցանկանալի անդադառնալ հետևյալ
հանգամանքին, հանձնաժողովի նախագահի կողմից վերանայման գործընթացին
ներկա անձանց ցուցադրված «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-
Հայաստան» ծրագրի Շահառուների խորհրդի 4-րդ կազմի անդամների
ընտրությունների քվեարկության արդյունքների վերանայման բոլոր վավեր և անվավեր
քվեաթերթիկներից ինձ մասնավորապես հետքերեցին 4 ակնհայտ անվավեր
հարցաթերթիկներ, որոնք, հանձնաժողովի բոլոր անդամների կողմից քվեարկության
դնելու արդյունքում, դրանց անվավերության դեմ քվեարկեց հանձնաժողովի ներկա
վեց անդամներից միայն մեկը: Նկատենք, որ քվեարկության արդյունքների հաշվարկի
ժամանակ, հանձնաժողովի բոլոր անդամների կողմից էին հիշյալ քվեաթերթիկները
վավեր ճանաչվել, իսկ այսօր նրանցից մեկը համոզվեց, որ դրանք անվավեր են, ինչը
չընդունվեց մնացած անդամների կողմից:

Վերոնշյալ չորս քվեաթերթիկներից մեկի վավերականությունը վիճարկելիս
հանձնաժողովի նախագահը դիմեց ինձ՝ հարցնելով արդյոք ես՝ որպես դիտորդ, ունեմ
առարկություններ, ինչին ես պատասխանեցի, որ քվեաթերթիկը հանձնաժողովի
անդամների կողմից վավեր ճանաչելը, ըստ իս, հակասում է ՀՀ ընտրական օրենսգրքի
58-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին, որի համաձայն սահմանված նմուշի
քվեաթերթիկը համարվում է անվավեր, եթե պարունակում է ընտրողի ինքնությունը
բացահայտող նշում: Վկայակոչվող քվեաթերթիկում բացի Շահառուների խորհրդի
անդամների ընտրությունների կարգի 4.11 հոդվածով սահմանված V-աձև նշումից,
կար նաև այլ նշում՝ V-աձև նշման կողքին կար նաև այլ նշում՝ թվի տեսքով:

Հարգանք՝



Մարիաննա Եղիազարյան

Մ. Եղիազարյան

ՀԱՅ-Հայաստանի Հանրապետության
Մուտքի № _____
Կայանքի _____

01.10.2009թ.

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-
Հայաստան» ծրագրի Շահառուների խորհրդի
4-րդ կազմի անդամների ընտրությունների
ընտրական հանձնաժողովին

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-
Հայաստան» ծրագրի Շահառուների խորհրդի
4-րդ կազմի անդամ Սյուզաննա Սողոմոնյանից

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Ընտրական հանձնաժողովի հարգելի անդամներ,

01.10.2009թ. տեղի ունեցավ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-
Հայաստան» ծրագրի Շահառուների խորհրդի 4-րդ կազմի անդամների 26.09.2009թ.-ին
անցկացված ընտրությունների քվեաթերթիկների վերանայման գործընթացը, որին
ունեցել են իմ մասնակցությունը որպես Շահառուների խորհրդի անդամ: Որպես կարծիք
գործընթացի վերաբերյալ ուզում եմ հայտնել հետևյալը.

Շահառուների խորհրդի 4-րդ կազմի անդամների ընտրությունների ընտրական
հանձնաժողովը կայացրել է որոշում, ըստ որի վավեր է համարել թվով չորս
քվեաթերթիկ, որոնք ըստ էության պետք է ճանաչվեն անվավեր, քանի որ իրենց մեջ
պարունակում են Շահառուների խորհրդի անդամների ընտրությունների կարգով
սահմանված նշումներից տարբերվող նշում:

Հարգանքով.

Շահառուների խորհրդի անդամ

01.10.2009թ.



Ս. Սողոմոնյան

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-
Հայաստան» ծրագրի Շահառուների խորհրդի
4-րդ կազմի անդամների ընտրությունների
ընտրական հանձնաժողովին

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-
Հայաստան» ծրագրի Շահառուների խորհրդի
4-րդ կազմի անդամ, «Հասարակական
քարոզչություն» հկ նախագահ
Պարզև Բարսեղյանից

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՀԱՅ ՇԽ ընտրական հանձնաժողովի հարգելի անդամներ,

Ս. ք. հոկտեմբերի մեկին մասնակցելով «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ծրագրի ՇԽ 4-րդ կազմի անդամների 26.09.2009թ.-ին անցկացված ընտրությունների քվեաթերթիկների վերանայման գործընթացին՝ ինձ մոտ ձևավորվել է որոշակի կարծիք, որի շուրջ կցանկանայի հայտնել իմ մտահոգությունները:

Նախ հարկ եմ համարում նշել, որ ամբողջ գործընթացը անհարկի ձգձգվեց օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով: Տեղի ունեցավ բանավեճ ոչ ըստ էության, որի արդյունքում տուժեց բուն գործընթացը և մասնակիցների մոտ ձևավորվեց անվստահության մթնոլորտ: Դրան գունարվեց նաև Շահառուների խորհրդի 4-րդ կազմի անդամների ընտրությունների ընտրական հանձնաժողովի կայացրած որոշումը, ըստ որի վավեր համարվեցին որոշակի քանակությամբ քվեաթերթիկներ, որոնց վավերականությունը կասկածելի էր, քանի որ դրանց մեջ առկա էին ՇԽ անդամների ընտրությունների կարգով սահմանված նշումներից տարբերվող նշումներ:

Շահառուների խորհրդի անդամ

01.10.2009 թ.



Պ. Բարսեղյան

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-
Հայաստան» ծրագրի Շահառուների խորհրդի
4-րդ կազմի անդամների ընտրությունների
ընտրական հանձնաժողովին
Շահառուների խորհրդի օգնականի

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-
Հայաստան» ծրագրի Շահառուների խորհրդի
4-րդ կազմի անդամների թեկնածու
Աշոտ Ալեքսանյանի լիազոր ներկայացուցիչ
Հարություն Աբգարյանից

Դիմում

Հարգելի գործընկերներ,

Ինչպես գիտեք, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ծրագրի Շահառուների խորհրդի 4-րդ կազմի անդամի թեկնածու Աշոտ Ալեքսանյանի կողմից ընտրական հանձնաժողովին ներկայացվել էր դիմում Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ծրագրի Շահառուների խորհրդի 4-րդ կազմի անդամների սեպտեմբերի 26-ին կայացած ընտրությունների քվեաթերթիկների վերահաշվարկ կատարելու պահանջով, որը ընտրական հանձնաժողովի կողմից բավարարվել է:

Հոկտեմբերի 1-ին կայացած արդյունքների վերահաշվարկի ընթացքում պարզվեց, որ վավեր ճանաչված 4 հատ քվեաթերթիկներ իրականում անվավեր են, որոնք կրկին հանձնաժողովի կողմից համարվեցին վավեր:

Հարգանքով՝

Հարություն Աբգարյան



01.10.2009թ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

հասարակական կազմակերպություն

0025, ք.Երևան, Ա.Մանուկյան 1,

էլ. փոստ՝ armpolit@yahoo.com

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

Տրվում է Հարություն Կարենի Աբգարյանին (Անձնագիր AF 0576737) առ այն, որ նա հանդիսանում է Աշոտ Ալեքսանյանի լիազոր ներկայացուցիչը և լիազորվում է մասնակցելու համար «Հագարանյակի Մարտահրավեր Գիմնադրամ - Հայաստան» շահառուների խորհրդի անդամների ընտրությունների ձայների վերանայմանը:

Նախագահ

Աշոտ Ալեքսանյան



30.09.2009թ.

«Հագարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-
Հայաստան» ծրագրի Շահառուների խորհրդի
4-րդ կազմի անդամների ընտրությունների
ընտրական հանձնաժողովին

«Հագարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-
Հայաստան» ծրագրի Շահառուների խորհրդի
4-րդ կազմի անդամ Կարեն Զաղոյանի լիազորված անձ
Կարեն Քոչարյանից

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Մասնակցելով 01.10.2009թ. անցկացված Հագարամյակի մարտահրավեր հիմնադրամի շահառուների խորհրդի 4-րդ կազմի անդամների 26.09.2009թ.-ին անցկացված ընտրությունների քվեաթերթիկների վավերության/անվավերության հարցերի քննարկմանը և լսելով հանձնաժողովի կայացրած որոշումը գտնում եմ, որ Հագարամյակի մարտահրավեր հիմնադրամի 4-րդ կազմի ընտրական հանձնաժողովը սխալ է մեկնաբանել ՀՀ ընտրական օրենսգրքի 58-րդ հոդվածը և ընդունել է սխալ որոշում՝ չորս անվավեր քվեաթերթիկները համարելով վավեր:

Հագարամյակի մարտահրավեր հիմնադրամի
շահառուների խորհրդի անդամ Կ. Զաղոյանի
լիազորված անձ



Կարեն Քոչարյան
01.10.2009թ.

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

ք. Երևան,

Մեկը հոկտեմբերի երկու հազար ինը բվական
01.10.2009թ.

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը, ի դեմս կազմակերպության նախագահ՝ Կարեն Զադոյանի լիազորում է Կարեն Քոչարյանին (անձնագիր՝ AF 0269052, տրված 007-ի կողմից՝ 11.04.2001թ.-ին) «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության անունից մասնակցել 2009թ.-ի սեպտեմբերի քսանվեցին ք. Երևանում կայացած «ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ ՀԻՄՆԱԳՐԱՄ - ՀԱՅԱՍՏԱՆ» ծրագրի շահառուների խորհրդի անդամների ընտրության քվեաբեթիկների վերահաշվարկման գործընթացին:

Լիազորագիրը տրվում է մեկ ամիս ժամկետով:

Լիազորող՝

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության

նախագահ՝ Կարեն Զադոյան



«Հագարամյակի մարտահրավեր» հիմնադրամ
Հայաստան» ծրագրի Շահառուների խորհրդի 4 -րդ
գումարման 26.09.2009թ ընտրությունների
Ընտրական հանձնաժողովին

Նույն ծրագրի Շահառուների խորհրդի 4 -րդ
գումարման կազմի անդամ Կ.Մովսիսյանից

Դ Ի Մ Ո Ւ Մ

«Հագարամյակի մարտահրավեր» հիմնադրամ
Հայաստան» ծրագրի Շահառուների խորհրդի 4 -րդ
գումարման 26.09.2009թ կայացած ընտրությունների
վերահաշվարկ վերաբերյալ.

Ընտրական հանձնաժողովի հարգելի անդամներ,

Ինչպես գիտենք 4 -րդ գումարման 26.09.2009թ կայացած ընտրությունների ընթացքին
հետևող և ոչ մի դիտորդ կամ վստահված անձ ինչ որ բաց թողնման կամ խախտման որևէ
փաստ չի արձանագրել, ինչի կարող էր քվեաթերթիկների վերահաշվարկման հիմք
հանդիսանալ:

Այդ իսկ պատճառով, ամենայնս հարգելով այլակարծության ազատության իրավունքը,
քվեաթերթիկների վերահաշվարկման մասին ցանկացած դիմում համարում եմ անհիմն և
հորդորում եմ հանձնաժողովին զերծ մնալ ավելորդ, ժամանակատար վերահաշվարկման
գոծընթաց իրականացնելու որոշումից:

Հարգանքներով՝

Շեխ անդամ

Կ. Մովսիսյան